ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16-Ա
25 օգոստոսի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2017 թվականի օգոստոսի 9-ի թիվ 02.2/5448-17 գրությամբ ներկայացված առաջարկությունները՝ Մարալիկի քաղաքային համայնքում 2017 թվականի հուլիս ամսին իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու մասին

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Մարալիկի քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2017 թվականի օգոստոսի 7-ի թիվ ԻՄՀ-18 արձանագրությանը կից թիվ 1-8 հավելվածներում նշված խախտումները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2017 թվականի օգոստոսի 7-ի թիվ ԻՄՀ-18 արձանագրությանը կից թիվ թիվ 1-8 հավելվածներում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Մարալիկի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանին՝
   Սույն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցին համապատասխան միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Մարալիկի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանի վրա:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

3.ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ

4. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

6. ՓԻԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄԱՐԱԼԻԿԻ ԲԱԳԱՐԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
25 օգոստոսի 2017 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի ԹԻՎ ԻՄՀ-18 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԹԻՎ 1-8 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատուն
1	2	3
Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ		
1.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը:	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	Համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
2. .<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն ապահովվել համայնքի ղեկավարի անհատական ակտերն ընդունելուց հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ավագանու անդամներին ուղարկելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերը փակցնելու ուղղությամբ:	Մշտապես	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
3. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմել համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա և այն ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
4.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունել անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ:	սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո 20 օրյա ժամկետում	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
5.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն օրենքով սահմանված կարգով ապահովվել տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
6.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Առողջապահության բնագավառ

1. Համայնքի վարչական սահմաններում՝ տարածքների սանիտարական մաքրման սխեման <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սանիտարական մաքրման սխեմային ներկայացվող պահանջներին համապատասխանեցնելու և սխեմայի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու ուղղությամբ:	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Առևտրի և ծառայությունների բնագավառ

1. Սննդամթերքի վաճառք իրականացնող առևտրի օբյեկտի աշխատողներին աշխատանքային արտահագուստով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ապահովելու ուղղությամբ	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Քաղաքաշինության բնագավառ

1.ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N596-Ն որոշման 169-րդ կետի պահանջի համաձայն համայնքի ղեկավարն ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում դրա մասին ծանուցել մարզպետին՝ կցելով ձևակերպված վարչական ակտի պատճենը:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
2.ՀՀ կառավարության 23.11.2003թ. N1910-Ն որոշմամբ հաստատված «Գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնների» N4 հավելվածի 10-րդ կետի համաձայն հաստատել յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման):	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
3. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի համաձայն սահմանված կարգով մահվան վկայականի հիման վրա կատարել համապատասխան գրանցում թաղումների գերեզմանատեղերի գրանցման մատյանում և քննարկել հողարկավորության կազմակերպումը ստանձնողին գերեզմանի վկայականի տրամադրման հարցը:	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
4. . ՀՀ կառավարության 23.11.2003թ. N1910-Ն որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 15-րդ կետի համաձայն քննարկել գերեզմանատան մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի տեղադրման հարցը:	Մինչև 20 սեպտեմբերի 2017թ	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 17

25 օգոստոսի 2017 թվականի

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին>> կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 5-րդ կետով, հաշվի առնելով Մարալիկ քաղաքի Գործարանային փողոց 1-ին նրբանցք տուն 10 հասցեի բնակիչ Գևորգ Համբարի Մանուկյանի (անձնագիր AH0658215, տրված 22.08.2008թ. 022-ի կողմից) 2017 թվականի հուլիսի 17-ի, Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի 57 հասցեի բնակիչ Արտակ Հարությունի Հարությունյանի (անձնագիր BA1750044, տրված 02.06.2015թ. 022-ի կողմից) 2017թ. օգոստոսի 7-ի և Գագիկ Վաչագանի Կարապետյանի (ն/ք 000302786, տրված 22.05.2013թ. 001-ի կողմից) 2017թ. օգոստոսի 21-ի դիմումները, ինչպես նաև Մարալիկի քաղաքապետի 2017թ. հուլիսի 18-ի , օգոստոսի 14-ի և օգոստոսի 22-ի եզրակացությունները.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

Սահմանել գույքահարկի զծով արտոնություն.

1. Մարալիկ քաղաքի Գործարանային փողոցի 1-ին նրբանցք տուն 10 հասցեի բնակիչ Գևորգ Համբարի Մանուկյանի (անձնագիր AH0658215, տրված 22.08.2008թ. 022-ի կողմից) անվամբ Մարալիկի քաղաքապետարանում հաշվառված INFINITI QX4 3.5 մակնիշի (29US239, 2001թ.) տրանսպորտային միջոցի ունեցած 193996 (մեկ հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր իննսունվեց) դրամ տույժի նկատմամբ:

2. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի 57 հասցեի բնակիչ Արտակ Հարությունի Հարությունյանի (անձնագիր BA1750044, տրված 02.06.2015թ. 022-ի կողմից) անվամբ Մարալիկի քաղաքապետարանում հաշվառված ԼԵՔՍՈՒՍ GS 300 մակնիշի (10OS845 1995թ.) տրանսպորտային միջոցի ունեցած 163298 (մեկ հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր իննսունութ) դրամ տույժի նկատմամբ:

3. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի 1-ին նրբ.14 տան հասցեի բնակիչ Գագիկ Վաչագանի Կարապետյանի (ն/ք 000302786, տրված 22.05.2013թ. 001-ի կողմից) անվամբ Մարալիկի քաղաքապետարանում հաշվառված 08-003-0126-0030-001 (ավտոտնակ) բն.շինության նկատմամբ հաշվարկված 184162 (մեկ հարյուր ութսունչորս հազար մեկ հարյուր վաթսուներկու) դրամ տույժը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ

4. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

6. ՓԻԼՈՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
25 օգոստոսի 2017 թվական